ք. Դիլիջան 12.01.2022

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՄՇՏԱՊԵՍ ԳՈՐԾՈՂ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 12-ԻՆ ԺԱՄԸ 15:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Հունվարի 12-ին ժամը 15:00-ին կայացած Դիլիջան համայնքի ղեկավարին կից հասարակական հիմունքներով մշտապես գործող Դիլիջանի քաղաքաշինական զարգացման և ներդրումների խրախուսման խորհրդի՝ **նիստերի դահլիճում** տեղի ունեցած նիստին մասնակցում էին Վաչագան Գևորգյանը, Արթուր Կարապետյանը, Վազգեն Սեդրակյանը, Ռոբերտ Ղարաքեշիշյանը, Ղազար Ղազարյանը, Արտակ Մարտիրոսյանը, Սուրեն Մելիքյանը, Արման Բազինյանը:

Նիստից բացակայում էր Սահակ Մկրտումյանը:

Խորհրդին մասնակցում էր Լիպարիտ Սանթրոսյանը (Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետի պաշտոնակատար):

Նիստը արձանագրում էր խորհրդի քարտուղար Լամարա Մանթաշյանը:

Նիստի օրակարգում ընդգրկված հարցեր.

1. Էմին Երիցյան՝ ք.Դիլիջան, Մյասնիկյան 38/5, երկհարկանի տան վերանորոգման և վերականգնման ՃՀԱ-ի կամ նախագծման թույլտվության դիմում:
2. Նաիրա Մարտիրոսյան՝ ք.Դիլիջան Մյասնիկյան 37/4, Հասարակական կենտրոնի վերակառուցում ՃՀԱ-ի կամ նախագծման թույլտվության դիմում:
3. «Դիլի Թաուն»՝ ք.Դիլիջան Զորավար Անդրանիկի փող 3-րդ նրբ. 12-16, բազմաբնակարան շենքի կառուցման ՃՀԱ-ի կամ նախագծման թույլտվության դիմում:

Հարց 1.

Քննարկվեց Էմին Երիցյանի՝ ք.Դիլիջան, Մյասնիկյան 38/5, երկհարկանի տան վերանորոգման և վերականգնման ՃՀԱ-ի կամ նախագծման թույլտվության դիմումը:

Տեղի ունեցավ մտքերի փոխանակում:

Ուսումնասիրելով ներկայացրած էսքիզային նախագիծը Վազգեն Սեդրակյանը նշեց, որ կապված արտաքին տեսքի հետ որևէ առարկություն չունի, աջ մասում ապակեպատումը փոխելով՝ պատշգամբի շենքը կստանա միասնական տեսք:
Խորհրդի անդամները կարևորեցին պարտադիր պահպանել շենքի՝ որպես պատմամշակութային հուշարձանի նախկին ճարտարապետական տեսքը:

Տեղի ունեցավ քվեարկություն:

Քվեարկության արդյունքում՝

Կողմ՝ 7 **դեմ՝ 1** **ձեռնպահ՝ 0**

1. Արթուր Կարապետյան
2. Վազգեն Սեդրակյան
3. Սուրեն Մելիքյան
4. Վաչագան Գևորգյան
5. Արտակ Մարտիրոսյան
6. Ռոբերտ Ղարաքեշիշյան
7. Ղազար Ղազարյան

1. Արման Բազինյան

Խորհուրդը որոշեց.

Էմին Երիցյանի՝ ք.Դիլիջան, Մյասնիկյան 38/5, երկհարկանի տան վերանորոգման և վերականգնման ՃՀԱ-ի կամ նախագծման թույլտվության դիմումի վերաբերյալ Դիլիջան համայնքի ղեկավարին տրամադրել դրական եզրակացություն:

Հարց 2.

Քննարկվեց Նաիրա Մարտիրոսյանի՝ ք.Դիլիջան Մյասնիկյան 37/4, հասարակական կենտրոնի վերակառուցման ՃՀԱ-ի կամ նախագծման թույլտվության դիմումը:

Տեղի ունեցավ մտքերի փոխանակում:

Վազգեն Սեդրակյանը տեսակետ արտահայտեց, որ ներկայումս տվյալ տեղանքում առկա են տարբեր ոճերի և ձևի կառույցներ, որոնք իրար հետ կապ չունեն: Ներկայացված նախագիծը կլուծի այդ խնդիրը, համալիրին տալով ամբողջական տեսք Դիլիջանին հարազատ ոճով:

Տեղի ունեցավ քվեարկություն:

Քվեարկության արդյունքում՝

Կողմ՝ 8 **դեմ՝ 0** **ձեռնպահ՝ 0**

1. Արթուր Կարապետյան

2. Վազգեն Սեդրակյան
3. Սուրեն Մելիքյան
4. Վաչագան Գևորգյան
5. Արման Բազինյան
6. Արտակ Մարտիրոսյան
7. Ռոբերտ Ղարաքեշիշյան
8. Ղազար Ղազարյան

Խորհուրդը որոշեց.

Նաիրա Մարտիրոսյանի՝ ք.Դիլիջան Մյասնիկյան 37/4, հասարակական կենտրոնի վերակառուցման ՃՀԱ-ի կամ նախագծման թույլտվության դիմումի վերաբերյալ Դիլիջան համայնքի ղեկավարին տրամադրել **դրական** եզրակացություն:

Հարց 3.

Լ.Սանթրոսյանը Խորհրդին ներակայացրեց «Դիլի Թաուն» ՍՊԸ-ի՝ ք.Դիլիջան, Անդրանիկի փ. 3-րդ նրբ. 12-16, բազմաբնակարան շենքի կառուցման ՃՀԱ-ի կամ նախագծման թույլտվության դիմումը:

Տեղի ունեցավ մտքերի փոխանակում:

Դիմումին դրական եզրակացություն տրամադրելու առաջարկը դրվեց խորհրդի քվեարկությանը:

Քվեարկության արդյունքում՝

Կողմ՝ 8 դեմ՝ 0 ձեռնպահ՝ 0

1. Արթուր Կարապետյան
2. Վազգեն Սեդրակյան
3. Սուրեն Մելիքյան
4. Վաչագան Գևորգյան
5. Արման Բազինյան
6. Արտակ Մարտիրոսյան
7. Ռոբերտ Ղարաքեշիշյան
8. Ղազար Ղազարյան

Խորհուրդը որոշեց.

«Դիլի Թաուն» ՍՊԸ-ի՝ ք.Դիլիջան, Անդրանիկի փ. 3-րդ նրբ. 12-16, բազմաբնակարան շենքի կառուցման ՃՀԱ-ի կամ նախագծման թույլտվության դիմումի վերաբերյալ Դիլիջան համայնքի ղեկավարին տրամադրել դրական եզրակացություն:

Խորհրդի անդամներ՝

Վազգեն Սեդրակյան

Սուրեն Մելիքյան

Վաչագան Գևորգյան

Արման Բազինյան

Արտակ Մարտիրոսյան

Ռոբերտ Ղարաքեշիշյան

Ղազար Ղազարյան

Խորհրդի նախագահ՝ Արթուր Կարապետյան

Խորհրդի քարտուղար՝ Լամարա Մանթաշյան